

Մ Ե Ռ Ե Լ Ն Ե Ր Ը

Պիսի հասկնայի՞ք մեզ,
Եթե մեր լուսքեան մարմարները փերելով՝
Պահ մը խօսեի՞նք ձեզի,
Գարնան այս գեղեցիկ առաւօտով,
Ո՛վ դուք, արեւին զաւազողներ...

Պիսի խմբուկի՞ք արդեօք
Մեր դողահար եւ քափանցիկ սոււերներուն շուրջ,
Մոռնալով ձեր առօրեան
Տարօրինակ հաշիւներէ կազմուած...
Պիսի դիտեի՞ք առանց վախի
Իրենց լոյսէն դաւաճելու ձեր աչքերուն մէջ...

Ա՛հ, մանաւանդ պիտի սեղմեի՞ք
Ցաւագին կարօտով, գորովալիք,
Մեր կուրծքերուն վանդակները ջախջախուած
Ձեր բաբախուն կուրծքին...

Մենք նոր բարբառ մը սովորեցանք,
Յորմենեհ երբ հրածեօք առինք աշխարհէն,
Համբոյր չունի խորհուրդն իր անցեալ
Մեր որդեան հար շրթներուն վրայ,
Եւ ժպիտը լոյսին ամենէն գաղտնի
Բիւրեղներէն է ծաղկած...

Բայց ի՞նչ որ մեզ կը բաժնէ կեանքէն,
Մահը չէ բընաւին:
Մահը գեղեցիկ յուսերու անսպառ աղբիւր՝
Ուրկէ ծառաւիները կ'ըմպեն անյազուրդ.
Ո՛չ ալ վախն է երկար մրկայոյզ գիշերներու,
Երբ անձրեւին լացը ձեզ արթուն կը պահէ...

Մոռացումն է որ մեզ կը նետէ անշափելի անդունդներու մէջ,
Կը բանձրացնէ կապարի ծանրութեամբ
Հողը մեր քուրճերուն,
Եւ անխորհակելի լեռներու նման
Կը բարձրացնէ փութերը մեր ոսկորներուն վրայ...

Մոռացումին մութ մասերէն է որ կը հիւսուին
Մամուռները օրիմունքուն,
Եւ անոր փոքորկոտ օճակն է որ կը օրջէ
Արատասուացող նրագները հսկումի...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ